ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ
ՂԵԿԱՎԱՐ

ք. Երևան «27» մարտի 2026 թ.

ՈՐՈՇՈՒՄ N 20-Ա

ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2025 թվականի սեպտեմբերի 22-ի N 835-Լ որոշմամբ հաստատված N 4 հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 12-րդ կետով և հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ղեկավարի 2025 թվականի դեկտեմբերի 9-ի N 440-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից ներկայացված առաջարկությունները՝ հայտատուների կողմից ներկայացված հայտերը և դրանց կից ներկայացված փաստաթղթերը Հավելվածի սահմանված չափանիշներին համապատասխանելու վերաբերյալ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մերժել Կոմիտեի ղեկավարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար հետևյալ հայտատուների կողմից ներկայացված հայտերը՝

1) հայտատու ֆիզիկական անձ Վրեժ Միհրի Սարգսյանի հայտն այն հիմնավորմամբ, որ դրան կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հայտատու ֆիզիկական անձ Վրեժ Միհրի Սարգսյանի կողմից չեն ներկայացվել Կոմիտեի ղեկավարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար անհրաժեշտ հիմքեր և հիմնավորումներ, մասնավորապես՝ Հավելվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ վերջին

հինգ տարվա ընթացքում կառավարությանը ենթակա մարմնի օրենսդրությամբ նախատեսված հիմնական ոլորտներում իրականացված առնվազն երկու ծրագրի մասնակցության վերաբերյալ,

2) հայտատու ֆիզիկական անձ Կարեն Արշակի Մարգարյանի հայտն այն հիմնավորմամբ, որ դրան կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հայտատու ֆիզիկական անձ Կարեն Արշակի Մարգարյանի կողմից չեն ներկայացվել Կոմիտեի ղեկավարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար անհրաժեշտ հիմքեր և հիմնավորումներ, մասնավորապես՝ Հավելվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ վերջին հինգ տարվա ընթացքում կառավարությանը ենթակա մարմնի օրենսդրությամբ նախատեսված հիմնական ոլորտներում առնվազն երեք տարվա մասնագիտական փորձառություն ունենալու և այդ ժամանակահատվածում տվյալ ոլորտում իրականացված առնվազն երկու ծրագրի մասնակցության վերաբերյալ,

3) հայտատու իրավաբանական անձ «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» ՀԿ-ի հայտն այն հիմնավորմամբ, որ դրան կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հայտատու իրավաբանական անձ «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» ՀԿ-ի կողմից չեն ներկայացվել Կոմիտեի ղեկավարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար անհրաժեշտ հիմքեր և հիմնավորումներ, մասնավորապես՝ Հավելվածի 6-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված՝ վերջին հինգ տարվա ընթացքում կառավարությանը ենթակա մարմնի օրենսդրությամբ նախատեսված հիմնական ոլորտներում իրականացված առնվազն երեք տարվա գործունեության փորձ ունենալու և այդ ժամանակահատվածում առնվազն երկու ծրագրի մասնակցության վերաբերյալ,

4) հայտատու իրավաբանական անձ «Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ-ի հայտն այն հիմնավորմամբ, որ դրան կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների

պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ-ի կողմից չեն ներկայացվել Կոմիտեի ղեկավարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար անհրաժեշտ հիմքեր և հիմնավորումներ, մասնավորապես՝ Հավելվածի 6-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված՝ վերջին հինգ տարվա ընթացքում կառավարությանը ենթակա մարմնի օրենսդրությամբ նախատեսված հիմնական ոլորտներում իրականացված առնվազն երեք տարվա գործունեության փորձ ունենալու և այդ ժամանակահատվածում առնվազն երկու ծրագրի մասնակցության վերաբերյալ:

3/27/2026

X

ՍՈՒՐԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Սուրեն Թովմասյան Signed by: TOVMASYAN SUREN 1201860393